ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

16 մայիսի 2019 թվականի թիվ 159-Ա

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑԱԾ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՊԱՏԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին կետով՝

կարգադրում եմ

1. Տարբեր միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից կառուցած պաշտպանիչ պատերի և կառույցների իրավիճակն արձանագրելու և անհրաժեշտության դեպքում ծագած խնդիրներին լուծումներ առաջարկելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ն. Գրիգորյան - խմբի ղեկավար, ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական

Գ. Մատինյան - մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ

Դ. Մխիթարյան - մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի վարիչ

Խ. Ամիրաղյան - մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ

Վ. Աբազյան - ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ /համաձայնությամբ/

Ռ. Պետրոսյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ 3 շաբաթյա ժամկետում ներկայացնել իրավիճակը, բացահայտված խնդիրները և լուծման ուղիները:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

16.05.2019

X

16 մայիսի 2019թ.
Ք. Իջևան